



Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի բարձր տնօրինությամբ, Վիրահայոց թեմում ծառայության կոչված Մայր Աթոռի միաբան հոգեշնորհ Տեր Մաղաքիա վարդապետ Ամիրյանը, Վիրահայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի հրամանով, նշանակվել է Սամցխե-Ջավախքի և Ծալկայի ընդհանուր առաջնորդական փոխանորդ, նստավայրը ք. Ախալքալաք։

Հոգեշնորհ Տեր Մաղաքիա վարդապետ Ամիրյանը (ավագանի անունը՝ Հայկ) ծնվել է 1980 թվականի սեպտեմբերի 13-ին, ՀՀ Արմավիրի մարզի Առատաշեն գյուղում։

Տեղի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո, 1997 թվականին ընդունվել է Շիրակի թեմի հոգևոր ընծայարան։

2000 թ-ին ավարտելով ընծայարանը, ընդունվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան հոգևոր ձեռնարան։

2006 թ-ին, Սրբոց Վարդանանց տոնին, ձեռամբ Գերաշնորհ Տեր Ներսես արքեպիսկոպոս Պողապալյանի, ստացել է սարկավագական ձեռնադրություն և աստիճան։

2006 թ-ի հունիսին ավարտել է Գևորգյան հոգևոր ձեռնարանը և Վեհափառ Հայրապետի տնօրինությամբ նշանակվել է Մայր տաճարում՝ իբրև լուսարար։

2007 թ. մարտի 22-ին պաշտպանել է ավարտաճառ «Հակոբ Կարնեցին և Կարինի նշանավոր վանքերը» թեմայով։

2007 թ-ի ապրիլի 15-ին՝ Կրկնագատիկի տոնին, ձեռամբ Հյուսիսային Ամերիկայի Արևմտյան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանի, ստացել է կուսակրոն քահանայի աստիճան։

2007-2008 թվականներին ծառայության է կոչվել Խոր Վիրապի վանքում՝ իբրև վանահոր օգնական։

2008-2011 թվականներին, Վեհափառ Հայրապետի տնօրինությամբ նշանակվել է Գևորգյան հոգևոր ձեռնարանի ավագ վերակացու, այնուհետև՝ Գևորգյան հոգևոր ձեռնարանի փոխտեսուչ։

2011 թ-ի մայիս ամսին, Վեհափառ Հայրապետի տնօրինությամբ, ծառայության է կոչվել Արգենտինայի Հայոց թեմում՝ իբրև առաջնորդանիստ Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու հոգևոր հովիվ։

2013 թ-ի հոկտեմբերի 5-ին պաշտպանել է վարդապետական թեզ «Ամենայն Հայոց կաթողիկոսական աթոռը և տեղափոխությունները» թեմայով և ձեռամբ Միքայել արքեպիսկոպոս Աջապահյանի ստացել մասնավոր վարդապետական աստիճանի տվչություն։

Արգենտինայում ծառայության ընթացքին Բուենոս-Այրեսի պետական համալսարանում ուսանել է իսպաներեն լեզու, այնուհետև Բուենոս –Այրեսի Պապական համալսարանում շուրջ 2 տարի ուսանել է Աստվածաբանություն։

2018 թ-ի հոկտեմբերին, Վեհափառ Հայրապետի տնօրինությամբ վերադարձել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին և 2019 թվականի մարտի 20-ին, Հայրապետական տնօրինությամբ

ծառայության է կոչվել Վիրահայոց թեմում որպես Սամցխե-Ջավախքի և Ծալկայի ընդհանուր առաջնորդական փոխանորդ, նստավայրը՝ ք. Ախալքալաք, Սբ. Խաչ առաջնորդանիստ մայր եկեղեցի:

Տիրապետում է հայերեն, ռուսերեն, անգլերեն և իսպաներեն լեզուներին: